ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի հուլիսի 11-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և ամբողջը մեկում համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 09.07.2024թ.-ին ստացված հարցադրման և դրա վերաբերյալ 11.07.2024թ. տրամադրված պարզաբանումը՝

1. <u>Հարցադրում</u>

«Հարգելի Գործընկերներ, Համակարգիչը ամբողջը մեկում չափաբաժնի տեխնիկական բնութագրում նկարագրված է հետևյալը. հիմնական կոշտ սկավառակ՝ առնվազն 1 x SSD 512GB, M.2 2280, PCIe Gen3 QLC: Խնդրում եմ պարզաբանել, թե ինչով է հիմնավորված QLC տեսակի SSD-ների պահանջը:»:

<u>Պարզաբանում</u>

«Պետական գնման գործնթացի կազմակերպման բոլոր դեպքերում Պատվիրատուն ինքն է գնահատում իր կարիքները, որին համապատասխան սահմանվում են գնման առարկայի բնութագրերը: Տվյալ դեպքում Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և ամբողջը մեկում համակարգիչների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված է գնվելիք ապրանքների այնպիսի չափորոշիչներով տեխնիկական բնութագիր, որը համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարիամ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: